

ՄԵԾԱՐԺԷՔ ԳՈՐԾ



Յուրաքանչյուր ժողովրդի սերունդների ավանդները, հոգեմտավոր կարողություններն ու գիտելիքները կուտակվում են նրա բառարաններում: Վերջիններս դառնում են տվյալ ժողովրդի ու նրա պատմության ճանաչողության լավագույն աղբյուր և ուսումնասիրության հուսալի վկայագիր: Այդ առումով արցախյան լեզվի ու պատմության գիտական հուշարձան է Արմեն Սարգսյանի «Ղարաբաղի բարբառի բառարանը» աշխատությունը: Անշուշտ, հրապարակի վրա եղել են ուսումնասիրություններ. դրանք, ինքնին արժեքավոր լինելով հանդերձ, լրման մեծ տարածք ունեին: Եվ ահա ներկայացված է մի աշխատություն, որն իր տեսակի մեջ բացառիկ է ու գնահատելի և՛ լեզվաբանական, և՛ բարբառագիտական, և՛ բանագիտական, և՛ մշակութապատմական մեծարժեքությամբ:

Աշխատության ներածության մեջ տրված է Արցախի բարբառի պատմության ակնարկ: Այն իրականում արցախյան բարբառի դասագիրք կարելի է համարել, որի նշանակությունը հատկանշելի է նրանով, որ ոչ բարբառագետ յուրաքանչյուր մարդու համար այն գիտական-տեղեկատվական ուղեցույց է և բարբառաճանաչողության բանալի:

Բառարանի լեզվաբանական ու բարբառագիտական նշանակությունն ինքնին կարևոր է, որովհետև առաջին անգամ համահայկական ծիրում գիտական արժեքայնության այդ որակով հայերենի հնագույն բարբառներից մեկի՝ Ղարաբաղի բարբառի հարուստ բառազանձն է ներկայացվում / շուրջ 40.000 բառային միավոր/:

Բառարանում ընդգրկված են բոլոր այն բառերն ու դարձվածները, որոնք գործածական են Ղարաբաղի բարբառի խոսվածքներում: Ներկայացվող բառահոդվածների գլխաբառերը տրված են իրենց հնչյունափոխական տարբերակներով, որոնցով հատկանշվում է նրանց խոսվածքային պատկանելությունը, իսկ ծագումնաբանական նշումները մեծապես արժևորվում են նրանով, որ, բառի կենսագրությունը տալուց զատ, իմաստաբանական տեղաշարժերի զարգացման ընթացքն են հետևելի դարձնում:

ԳՐԱՆՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԲԵԼԵՆՅԱՒ, BOOK REVIEWS

Բառարանում լեզվաոճական նշումներով բառահոդվածները առանձնահատուկ տեղ են գրավում և արժևորելի են իրենց նշանակությամբ: Դրանք բառապաշարի այն մասնաշերտն են կազմում, որոնք գրեթե չեն արտացոլվում բարբառագիր ստեղծագործություններում, բայց կենսունակ են բարբառակիրների խոսքում: Այս մասնաշերտի բառերը հազվադեպ են թափանցում գրավոր լեզվի մեջ: Ուշագրավ է, որ դրանք հիմնականում հնդեվրոպական ժազման են և բարբառային իրենց գծերով արխաիկ բնույթ ունեն, ուստի և խիստ հետաքրքրական են գիտական առումով: Եվ ընդհանրապես, բանավոր աղբյուրներից քաղված բառահոդվածները /իսկ դրանք բազում են/, դրանց համապատասխան օրինակներն առանձնապես նշանակալի են, որովհետև բառարանը սոսկ արձանագրված ու գրավոր վկայված լեզվական իրողությունների պատմական հուշարձան չէ, այլ բառապաշարի իրական պատկերն ու կենդանի խոսքի կենսունակությունն արտացոլող համապարփակ աշխատություն, որում արտացոլվել է բարբառախոսների լեզվական ողջ հարստությունը:

Այդպիսով՝ բառարանը բարբառի թե՛ հնչյունական համակարգի, թե բառային կազմի, թե՛ քերականական կառուցվածքի ուսումնասիրության և թե՛ ոճական առանձնահատկությունների վերհանման համար գիտական արժեքայնությամբ հուսալի և հավաստի աղբյուր է:

Հատկանշական է նաև, որ, տպագիր ու անտիպ բանահյուսական և բարբառագիր այլ ստեղծագործություններից բառահոդվածների բացատրությունները տալով, բառարանագիրը գիտական տառադարձության խստիվ հետևողությամբ է վկայում օրինակները, ընդ որում ոչ միայն իր անձնական արխիվից հղվող օրինակներն են գիտականորեն ճշգրիտ տառադարձված, այլև ուրիշ աղբյուրներում անսկզբունք տառադարձությամբ /օբյեկտիվ պատճառներով/ վկայված օրինակները: Երկու դեպքում էլ բառարանագիրը սկզբունքորեն տարբերակված մոտեցում ու գիտական հետևողություն է դրսևորել. ձեռագիր աղբյուրներից հղվող օրինակները գիտականորեն տառադարձված են, և խստորեն պահպանվել են խոսվածքային առանձնահատկությունները (իր իսկ հեղինակի վկայությամբ՝ դրանց տառադարձումը կատարվել է խոսվածքակիր երկու և ավելի բարբառախոսների օգնությամբ), իսկ տպագիր ոչ բոլոր աղբյուրներից են ընտրվել օրինակներ՝ զերծ մնալով հիմնականում այնպիսի աղբյուրներից, որոնք տառադարձության ակնհայտ խախտումներով են արձանագրված: Այլ դեպքերում բառարանագրի միջամտությունը սահմանափակվել է նրանով, որ ուղղվել են տառադարձման ակնհայտ սխալները: Այդ առումով կարևորվում է նաև բառարանի բանագիտական արժեքը, որովհետև բանահյուսական ստեղծագործություններից վկայված օրինակների ճշգրիտ տառադարձությունը մեծացնում է նրանց աղբյուրագիտական հավաստիությունը: Իսկ աղբյուրագիտական այդպիսի

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԲԵԼԵՏՈՒ. BOOK REVIEWS

լուրջ քննությունն ու սկզբունքորեն տարբերակված մոտեցումը վկայում են բառարանագրի գիտական մեծ պատասխանատվության ու մասնագիտական բարձր պատրաստականության մասին:

Կարևորելի ու մեծապես գնահատելի է բառարանի մշակութաբանական արժեքը: Բառահոդվածների վերջում տրված են դարձվածներ, որոնց թվում նաև ասացվածքներ, կայուն բառակապակցություններ, ոճական արտահայտություններ: Գաղտնիք չէ, որ դարձվածները մշակույթի ազգային պատկանելությունը որոշարկող կորորդինանտներն են, և նրանցում է արտացոլված ազգային-մշակութային աշխարհայացքը: Ուստի մեծ է աշխատության նշանակությունը, որովհետև այն ոչ միայն բարբառի բացատրական և ստուգաբանական, այլև դարձվածաբանական բառարան է:

Բառարանի գնահատությունն ամբողջականանում է նաև հեղինակի մի կարևոր արժանավորությամբ. այն, որ բառարանագիրը բարբառակիր բանագետ-բանահավաք ու բարբառագետ-լեզվաբան է: «Ղարաբաղի բարբառի բառարանի» բարձրարժեքությունը գերազանցապես այդ իրողությամբ է պայմանավորված:

Արմեն Սարգսյանի «Ղարաբաղի բարբառի բառարանը» հայ բարբառագիտության պատմության մեջ մնայուն հուշարձան է, իսկ Ղարաբաղի բարբառի ուսումնասիրության պատմության մեջ՝ բացառիկ երևույթ:

**Մեսրոպ Մաշտոց Համալսարանի
հայոց լեզվի և գրականության ամբիոնի վարիչ,
բ.գ.թ., դոցենտ Լուսինե Մարգարյան**